ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«5» հունիսի 2025 թվականի N: 228 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՋՐԱՀԵՂՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ», «դ» և «զ» կետերի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի 2025 թվականի մայիսի 21-ի թիվ 926-95/15 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 2025 թվականի հունիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման նպատակով հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գտնվող Մանթաշի, Թավշուտի, Արփիի, Կառնուտի, Սառնաղբյուրի և Վարդաքարի ջրամբարների պատասխանատուներին՝

ա. 2025 թվականի հունիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ջրամբարների տարածքներում սահմանել ուժեղացված շուրջօրյա հերթապահություն,

բ. ջրամբարների ափամերձ տարածքներում մշտապես իրականացնել սանիտարական գոտու պահպանության համար նախատեսված միջոցառումներ,

գ. արգելել անսարք կամ ինքնաշեն լողամիջոցներով ջրամբարների ջրային տարածք մուտք գործելը.

2) Հայաստանի Հանրապետության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղի տնօրենին՝

2025 թվականի հունիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում մարզի ջրային ավազանների սանիտարական վիճակի նկատմամբ սահմանել խիստ հսկողություն.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվամիջոցներով ազգաբնակչությանը պարբերաբար տեղեկացնել ջրային տարածքներում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին՝ սույն որոշման հավելվածում թվարկված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքներում գտնվող ջրային տարածքներում՝ համաձայն հավելվածի՝

1) տեղադրել համապատասխան նախազգուշացնող ցուցատախտակներ.

2) համայնքի ուժերով սահմանել հսկողություն.

3) ջրահեղձման դեպքերի կանխարգելման նպատակով հանգստի վայրերում՝ հովեկների շրջանում իրականացնել բացատրական աշխատանքներ:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
հունիսի 5 -ի N228 -Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԳՏՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Ջրային տարածքի անվանումը
1.	Գյումրի	Գյումրի	Քաղաքային լողավազաններ, շատրվաններ, ջրավազաններ
2.	Ախուրյան	Ազատան	Ազատանի լիճ
3.		Ախուրիկ	Ախուրյանի ջրամբար (Ախուրիկի լճակ)
4.		Բայանդուր	Ախուրյանի ջրամբար
5.		Գետք	Ախուրյանի ջրամբար
6.		Երազգավորս	Ախուրյանի ջրամբար
7.		Կառնուտ	Կառնուտի ջրամբար
8.		Կրաշեն	Կրաշենի լճակ
9.		Հովիտ	Կառնուտի ջրամբար
10.		Բասեն	Կառնուտի ջրամբար
11.		Մարմաշեն	Մարմաշենի լճակ
12.		Վահրամաբերդ	Վահրամաբերդի լճակ
13.		Ջաջուռ	Ջաջուռի սելավակարգավորիչ ջրամբար
14.	Անի	Մարալիկ	Մարալիկի սելավակարգավորիչ
15.		Ձորակապ	Մարալիկի սելավակարգավորիչ
16.		Քարաբերդ	Գյուղամիջյան լճակ
17.		Աղին	Ախուրյանի ջրամբար
18.		Իսահակյան	Ախուրյանի ջրամբար
19.		Լուսաղբյուր	Ախուրյանի ջրամբար
20.		Շիրակավան	Ախուրյանի ջրամբար
21.		Ջրափի	Ախուրյանի ջրամբար
22.		Սառնաղբյուր	Սառնաղբյուրի ջրամբար
23.	Ամասիա	Զարիշատ, Երիզակ	Արփի լճի ջրամբար
24.		Բերդաշեն, Պաղակն	Արփի լճի ջրամբար
25.		Գառնառիճ, Եղնաջուր	Արփի լճի ջրամբար
26.		Ձորակերտ, Դարիկ	Արփի լճի ջրամբար
27.		Ծաղկուտ, Լորասար	Արփի լճի ջրամբար
28.		Շաղիկ	Արփի լճի ջրամբար
29.	Աշոցք	Բավրա	Թավշուտի ջրամբար
30.		Թավշուտ	Թավշուտի ջրամբար
31.		Սիզավետ	Թավշուտի ջրամբար
32.		Ձորաշեն	Ձորաշենի լճակ

34.	Արթիկ	Փոքր Մանթաշ	Արհեստական լճակ
35.		Վարդաքար	Վարդաքարի ջրամբար
36.		Հովտաշեն	Վարդաքարի ջրամբար
37.		Հոռոմ	Վարդաքարի ջրամբար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է